МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **19.10.2023թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/86
(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից ԵՊՀ հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի կարիքների համար սպորտային գույքի ձեռքբերման նպատակով 14.09.2023թ.-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/86» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/86» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) նիստի թիվ 3 արձանագրության (այսուհետ նաև՝ արձանագրություն) համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, հետևյալը. «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը 10, 11, 12, 13, 14, 15, 17-րդ չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- *Համակարգով ներկայացված 10, 11, 12, 13, 14, 15, 17-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում՝ «ֆիրմային անվանում», «ապրանքային նշան», «մակնիշ», «արտադրողի անվանում» սյունյակներում նշվել է «CHINA» անվանումը, այնինչ պետք է հստակ նշել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողը:»:*

Հանձնաժողովի քարտուղարի կողմից www.eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, արձանագրեց, որ «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել 10, 11, 12, 13, 14, 15, 17-րդ չափաբաժինների մասով:

Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետով, որոշեց վերջինիս կողմից ներկայցված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և նույն հոդվածի 2-րդ մասը, որոշեց «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

Պատվիրատուի կողմից, https://gnumner.minfin.am/ կայքում, 09.10.2023թ.-ին հրապարակվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/86» ծածկագրով գնման ընթացակարգը 10, 11, 12, 13, 14, 15, 17-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն

հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է…:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում փաստում ենք, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող

ապրանքի ամբողջական նկարագիրը, իրական շահառուների մասին հայտարարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող գնային առաջարկի և հայտի ապահովման համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հարկ ենք համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ցանկանում ենք նաև փաստել, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր: Եվ եթե փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ հանգում ենք այն եզրակացության, որ

«Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ն, հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑ

1. «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու /2/ տարի ժամկետով:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Մարիամ Գավալյան Կարապետի» Ա/Ձ-ին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ